ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի ապրիլի 8-ին Կոտայքի մարզի Առինջի գյուղապետարանում տեղի ունեցավ համայնքի ժողովը:

Բացման խոսք

Հարգելի համագյուղացիներ, այսօր մեր համայնքի ժողովին ներկա են մեր մարզպետարանի ներկայացուցիչները, հարգարժան Մարզպետ Շահգալդյանի գլխավորությամբ:

Օրակարգ

1.Համայնքի ղեկավարի 2009 թվականի 2-րդ եռամսյակի և 2010 հաշվետվություն
/Զեկուցող Գագիկ Սարգսյան/

2. Հարցեր բնակիչների կողմից

Եզրափակիչ խոսք ՀՀ Կոտայքի մարզպետ պարոն Կ.Շահգալդյան

Համայնքի քառամյա զարգացման ծրագիր

Ելնելով համայնքի քառամյա ծրագրից կարևորում եմ համայնքի նպաստի այն խնդիրները, որոնք առաջացել են բնակիչների հետ հանդիպումների, առաջարկությունների, ընդունելությունների ժամանակ.

Իսկ հատկապես կարևոր եմ համարում.

1.Համայնքի «Պարույր Սևակ», «Խաչատուր Աբովյան», «Մհեր Մկրտչյան» թաղամասերի կոյուղու կառուցում

2. Գիշերային լուսավորման ապահովման.

3. ճանապարհների նորոգմանը

4. Մշակույթի տան նոր գույքի ձեռք բերում

5. Նոր աղբարկղների ձեռ բերում.

6.Նշեմ, որ 2009 թվականին Հայաստանի Սոց ներդրումների հիմնադրամի ծրագրով վերանորոգվել է գյուղի մշակույթի տունը

7. 2009 թվականին ավարտին է հասցրվել գյուղի հիմնական մասի փողոցների և տների համարակալման և հասցեավորման աշխատանքները

8. Առանձնակի նշանակություն եմ համարում ավագանու, համայնքի ղեկավարի ընդունված որոշումների հրապարակայնությունը. համոզված լինելով, որ ազգաբնակչության հետ բավարար հաղորդակցությունը կնպաստի մեր աշխատանքների դրական զարգացումներին.

Տեղեկատվություն համայնքի բնակչության մասին

2009թ.

1. համայնքի բնակչությունը՝ - 5660

2. Տնտեսությունը՝ - 1635

3. Ընտրողները՝ -4100-

4.Նոր ծնվածներ - 94 երեխա

2010թ.

1. համայնքի բնակչությունը՝ -5682

2. Տնտեսությունը՝ - 1640

3.Նոր ծնվածներ - 34 երեխա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009Թ. 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Համայնքի փողոցների հասցեավորման և տների համարակալման համար - 979740դրամ
2. Անահիտ Ծառուկյանի անվան բուժ. ամբուլատորիային փոխանցել է դրամաշնորհ-100000դրամ
3. Կ.Ծառուկյանի անվան միջն դպրոցին փոխանցվել է դրամաշնոր-10400
4. Կոտայք հիմադրամին այլ ընթացիկ դրամաշնորհ -150000դրամ
5. Ասֆալտապատում-4278350դրամ

Սոց. օգնություն 2009թվականի

1. Օգնություն անապահով ընտանիքներին-705000դրամ
2. Սպորտային նպաստ-70000դրամ
3. Ամանորի կապակցությամբ օգնություն զոհված ազատամարտիկների ընտանիքներին-97500դրամ
4. Ոսման վարձ-170000դրամ

2010թվականի սոց օգնություններ

1. Օգնություն անապահով ընտանիքներին-150000դրամ

2.Հուղարկավորության նպաստ- 25000դրամ

3.Մարտի -8-ի կապակցությամբ օգնութ.-15000դրամ

Քաղաքաշինության բնագավառին տրվող հարցեր

1.. 2009 թվականի տրվել է 57 շինարարության թույլտվություն:

2. 2009 թվականին տրամադրվել է 36 ավարտական ակտ:

Առողջապահական խնդիրներ

1.Համայնքում գործող բուժ.«Անահիտ Ծառուկյանի» անվան ամբուլատորիան բավարարված է ժամանակակից հնարավոր տեխնիկայով:

Բնակչությանը սպասարկում են որակյալ բուժ, անձնակազմ, ընտանեկան բժիշկներ ատամնաբույժ, որն էլ գնահատվում է բնակչության կողմից:

2. 2010թ «Ա.Ծառուկյանի»անվան բուժ ամբուլատորիային փոխանվել է դրամաշնորհ- 200000դրամ

Կրթական խնդիրներ

Կրթական խնդիրները միշտ էլ եղել են իմ ուշադրության կենտրոնում: Նշեմ որ 2009թ փոխանցվել է ուսանողների ուսման վարձ 170000դրամ

1.Կ.Ծառուկյանի անվան միջն դպրոցին փոխանցվել է դրամաշնորհ-104000դրամ

2.Գրադարանը հարստացվել է գեղարվեստական գրքերով: Ինչպես վերևում նշեցի կրթությունը և դպրոցը միշտ էլ պետք է լինի համանքի ուշադրության կենտրոնում:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ Կոտայքի մարզպետ՝ պարոն Կ.Շահգալդյանը, բնակիչների կողմից տրված հարցերին, մանրամասնորեն պատասխանեց պարոն Կ.Շահգալդյանը